ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
HISTORY

ՌԱՖԻԿ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ*

Պատմական գիտությունների դոկտոր,
Երևանի պետական համալսարանի
հնագիտության և ազգագրության ամբիոնի պրոֆեսոր
rafiknahapetyan@mail.ru
DOI: 10.52853/18294073-2021.3.27-5

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՏԻՊԵՐԸ ԱՂՁՆԻՔՈՒՄ (XIX ԴԱՐ – XX ԴԱՐԱՍԿԻԶԲ)

Բանալի բառեր՝ Աղձնիք, բնակավայր, գլխատուն, ներսույթ, թորվանտուն, Խիանք գավառ, Տալվորիկ:

Ներածություն

Հայ ժողովրդի պատմաազգագրական մարզերի ազգագրական ուսումնասիրությունը Հայաստանում սկսվել է XIX դ. վերջերին: Այդ ասպարեզում շատ կարևոր ավանդ են ունեցել մեծանուն ազգագրագետներ Գ. Սրվանձտյանցը, Ե. Լալայանը, Ստ. Լիսիցյանը, Վ. Բդոյանը, Դ. Վարդումյանը և այլք, որոնք բացահայտել են պատմաազգագրական մի շարք մարզերի հայ բնակչության կերտած կենցաղամշակութային հարուստ ժառանգության բազում կողմեր և յուրահատկություններ:

Պատմական Հայաստանի էթնոմշակութային-ազգագրական ինքնատիպ գծերով հարուստ շրջաններից մեկն էլ Աղձնիք նահանգն էր: Հանրապետության Թալինի, Աշտարակի, Արարատյան դաշտավայրի մի շարք բնակավայրերում և Երևան քաղաքում բնակվող՝ Աղձնիքից մազապուրծ փրկվածներից

* *Հոդվածը ներկայացվել է 24.05.21, գրախոսվել է 13.09.21, ընդունվել է տպագրության 19.11.21:*

1970-ական թթ. գրառված դաշտային ազգագրական նյութերի հիման վրա հրատարակել ենք տասնյակ հոդվածներ և մենագրություններ:

Այդուհանդերձ, աղձնիքահայերի մշակութային հարուստ ժառանգության բազում կողմեր դուրս են մնացել համալիր հետազոտության շրջանակներից: Սույն ակնարկը գրված է հիմնականում բանասացներից գրառված հեղինակի անձնական արխիվային նյութերի հիման վրա: Այն վերաբերում է կենսապահովման մշակույթի ուրույն տարրերից մեկին՝ ժողովրդական բնակարանին:

Աղձնիքի բնակլիմայական և աշխարհագրական յուրահատուկ պայմանները, բնակչության ավանդական զբաղմունքները, ազգային ավանդույթները, շատ հաճախ նաև պատմաքաղաքական իրողությունները, երբեմն էլ միջէթնիկ շփումները հանգեցնում էին բնակավայրերի և բնակելի համալիրների տիպերի բազմազանության: Բնակարանի ճարտարապետական լուծումների վրա մշտական ու փոփոխվող գործոնների ակտիվ ազդեցությամբ առաջացել են երկրամասի գյուղական և քաղաքային բնակելի տների տիպեր, որոնք, սակայն, տարբերվել են միմյանցից՝ տեղական ավանդույթներից բխող ընդհանրական գծերով, ինքնատիպ հորինվածքներով:

Բնակարանային համալիրները Սասունում

Սասունում բնակավայրերը և բնակարանները հիմնվում էին ամուր, ռազմական տեսանկյունից անմատչելի, ինքնապաշտպանության համար ապահով տեղերում, ինչ-որ չափով հաշվառվել են նաև քամիների ուղղությունը, արևահայաց դիրքը, ջրամատակարարման հնարավորությունները, ձմռանը աղետաբեր ձնահոսքերից (**հուսին**) զերծ մնալու հանգամանքները: Հովտային շրջաններում բնորոշը միաբաժին մեծ տներն էին, որոնք հայտնի էին **խորընդուն** (**խորընտուն**) անունով՝ մեծ տուն նշանակությամբ: Տան ընդհանուր մուտքից սկսվում էր **փողան** կոչված փակ միջանցքը, որի ձախ կամ աջ կողմի պատի երկարության կեսից մուտք էր բացվում դեպի բուն տունը՝ **խորընդունը** կամ **կենալատունը,** այստեղից էլ՝ **կուլին**-մառան, **փետակնոց** (ամբարնոց) կոչված բաժանմունքները: Տան ճակատը՝ **բարը,** հարավային կողմն էր ուղղված՝ տունը լույսով ու արևի ջերմությամբ ապահովելու համար: Այն քառանկյուն հատակագիծ ուներ: Այստեղ թոնիր չէր դրվում, դրա փոխարեն օգտագործվում էր պայտաձև վերգետնյա օջախը, որին **թվեք,** նաև **հանգութ** էին անվանում: Այն տեղադրվում էր խորընտան հարավային պատի միջնամասում: Թոնիրն այստեղ անծանոթ էր, որովհետև ձմռան երկարատևության պատճառով ցորեն չէր աճեցվում, հիմնական հացաբույսերը կորեկն ու **գլգիլն**

(կըլկիլ) էին, որոնց այլուրից միայն **բոքոն** հացատեսակն էր պատրաստվում օջախ-թվեքի վրա:

Խորընտան մի մասն է կազմում գոմը՝ նույն ծածկի տակ, երկարատև ձմռանը այն անասունների շնչով տաք պահելու, ինչպես նաև թուրք և քուրդ ավարառուների թալանը կանխելու նպատակով: Խորընտան և գոմի բաժանարարն անասունների մսուրքն էր, որը հաստատվում էր 60–70 սմ բարձրությամբ պատի վրա, կամ էլ ճիպոտահյուս պատնեշը **(աղադ)**: Անասունների գլուխները ուղղվում էին բնակելի կողմը: Խորընտան հիմնական պատի մեջ էլ թողնվում էին անցքեր (ակնատ)՝ ոչխարների փարախը հսկելու համար: Համալիրը մեկ մուտք ուներ: Դուռը մեկփեղկանի էր, 2–3 լայն ու հաստ կաղնե տախտակներից, մեջտեղով 4–5 սմ հաստությամբ կրկնակի գոտին էր՝ **գրիրա** կոչվող փայտե փականով: Պատերը հաստ էին, մոտ 1 մետր՝ ծածկի ծանրությանը դիմանալու, տունը տաք պահելու, ամրոցատիպ կառույց դարձնելու համար: Պատերը կառուցվում էին ժայռաբեկոր քարերից, շաղախը խիճն էր և կավե ցեխը: **Կալտունը** խորընտան դիմաց էր կառուցվում՝ գետնափոր կամ տեղանքով պայմանավորված՝ կիսագետնափոր, որի ճակատային մասը բաց էր: Ձմռանը այստեղ էին կերակրում անասուններին: Ուշագրավ են Մ. Դանիելյանի «Ուղևորի հիշատակները» ուղեգրության նկարագրությունները Շարդ գավառակի (Զոքան) գյուղական տների մասին: [Այստեղ] «տունները առանց բացառության բոլորն էլ միահարկ են ու հողաշեն, ցածր ու նեղլիկ, առանց պատուհանի, մարդ ու անասուն գրեթե քովե-քով կը բնակին և մանավանդ ձմեռը իրարու հոտով ու շնչով կը տաքանան»[1]:

Տան անդամների հետ համատեղ կթու, առանձնապես լծկան անասուններին պահելը կարևոր նշանակություն ուներ երկրագործական-անասնապահական համակցված արդյունավետ տնտեսավարման համար:

Ձեռքի տակ եղած դաշտային ազգագրական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Սասունի հովտային շրջանների խորընտան և ախոռի հատակագիծը գրեթե նույնությամբ համընկնում էր հայ արմենների տան քսենոփոնյան նկարագրին: Հույն պատմագիրը գրում է. «Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը՝ ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն՝ ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր (հողի մեջ), մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը: Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով: Այն-

[1] Տե՛ս «Արևելք» 1903, № 5221:

տեղ կար նաև ցորեն և գարի, և ընդեղեն, և կրատերների (կարասների) մեջ գարուց պատրաստած գինի, որի մեջ լողում էին գարու հատիկներ...»[2]: Սասունում այդպիսի պարզունակ գետնափորները, որ հիմնականում հարմարեցված էին անասնապահական տնտեսությանը, հարատևեցին մինչև XIX դարավերջ և XX դարասկիզբ[3]:

Քսենոփոնի նկարագրությունից ակնհայտ է դառնում, որ մարդկանց և անասունների միևնույն բաժանմունքում լինելը գրեթե համընկնում է Աղձնիքի նահանգի տան ձևին[4]: Մեր նյութերը նույնպես հաստատում են, որ Քսենոփոնն իր արշավանքի ժամանակ պիտի անցած լիներ այնպիսի բնակավայրերով, որոնք ունենային Աղձնիքի խորընտան և ախոռի նկարագիրը: Հ. Հյուբշմանը Քսենոփոնի նկարագրած Կենտրիդես գետը նույնացնում է Աղձնիքի Արևելյան Տիգրիսի կամ Բոհտան սուի հետ[5]:

Լեռնային կլիմայական բարդ պայմանները՝ ցրտաշունչ ձմեռն ու ամառային կիզիչ տոթը, երկար ժամանակ շարունակում էին մարդուն թելադրել կառչելու նախնական տների ձևերին՝ գետնի մակերեսից հնարավորինս խորանալով հողի կամ ժայռերի մեջ՝ պաշտպանվելու համար ցրտից և տոթից, թեև տեխնիկական միջոցների և կուլտուրայի կատարելագործման շնորհիվ սկսել էին կառուցվել վերգետնյա տներ[6]: Հազարամյակների ընթացքում Քսենոփոնի շրջանի տանն ավելացել էին նաև օժանդակ բաժիններ: Քսենոփոնյան տան և Աղձնիքի բնակարանային համալիրների տարբերությունն այն էր, որ առաջինը գետնափոր էր, իսկ վերջինը կիսագետնափոր կամ գետներես: Աղձնիքի վերոհիշյալ տարածքով անցած ճանապարհորդ գերմանացի սպա Նոլդեն փաստում է Բաղեշ քաղաքի շրջակայքի գյուղերի հայ բնակչության հյուրասեր լինելը, նշում է նաև, որ շրջակա լեռների լանջերին փռված գյուղերի շենքերը «իրենց նախնական հատուկ կազմությամբ Քսենոփոնի ժամանակին միշտ մտադրություն գրաված են»[7]:

Սասունում և նրան հարակից լեռնային շրջաններում **խորընտների** կողքին, առավել անառիկ վայրերում, տարածում ունեին 2–3 հարկանի **քոշքերը,** որոնց ներսույթից էին փայտե աստիճաններով բարձրանում վերին հարկերը՝

---

[2] **Քսենոփոն** 1970, 97:

[3] «Արաքս» հանդես 1894–95, գ. Ա, էջ 88: Հմմտ. «Լումա» 1893, գ. Ա, «Արձագանք» 1894, № 140:

[4] Տե՛ս **Նահապետյան** 1973, 236–243:

[5] Տե՛ս **Հյուբշման** 1907, 12:

[6] Տե՛ս **Սամուելյան** 1941, հ. 2, 193:

[7] «Հանդէս ամսօրեայ» 1896, № 9:

դառնալով մի յուրատեսակ ամրոց՝ օտարների հարձակումներից պաշտպանվելու համար: Դրանք բնակելի և տնտեսական նշանակության համակառույցներ էին, որոնց առաջին հարկը կթու և լծկան անասուններին էր հատկացվում, երկրորդը՝ մարդկանց, լուսավորվում էր առաստաղին կպած փոքրիկ օդանցք պատուհաններով, ջեռուցվում բուխարի անվամբ ծխնելուզավոր կրակարանով և բաց օջախով, իսկ երրորդը, որ կոչվում էր **ռոշ**, որոշ տեղերում **ալիք**, ծառայեցվում էր գյուղատնտեսական մթերքների պահպանմանը և վտանգի դեպքում պաշտպանվելուն, նաև օտարականներին հյուրընկալելուն: Հաճախ վերնահարկում ունենում էին հյուրասենյակ-օդա՝ դրսից բացվող առանձին մուտքով: Ամռանը գերդաստանը բարձրանում էր այստեղ, մինչև ցրտերն ընկնելը: Ռոշի պատերի բոլոր կողմերում, հավասար շարքով թողնվում էին փոքրիկ պատուհաններ՝ **շըբակ** կամ **շառաֆներ,** որոնք խաղաղ ժամանակ փակվում էին ընկույզի յուղով պատված թղթերով՝ անթափանց դարձնելով տնային լուսավորությունը գիշեր ժամանակ. քրիստոնյաների տներից լույս չպետք է երևար՝ այլադավաններից աննկատ մնալու համար[8]: Վտանգի դեպքում պատուհաններից դուրս էին հանում հրացանների փողերը: Վերից վար թեքությամբ մի այդպիսի անցք էլ թողնվում էր մուտքի դռան վերևի մասում, որտեղից հրացանի կրակոցով կարող էին չեզոքացնել վտանգը: Երրորդ հարկի ծածկը հենված էր երեք պատերի վրա, լանջային կողմը բաց էր: Սասնա Գրմավ, Սեմալ և լեռնային այլ գյուղերում տները կառուցվում էին լեռների թեք լանջերին: Առաջին հարկի հետևի պատը ամբողջությամբ, իսկ կողային պատերը կիսով չափ թաղված էին գետնի մեջ, բացի առջևի պատից, որը հիմնվում էր գետնի երեսին: Առաջին հարկը խոշոր անասունների **թավլան** էր և **օճխրկոմը,** որոնց բաժանարարը **փողան**-միջանցքն էր: Համեմատաբար ապահով վայրերում ոչխարի փարախը բնակավայրից ոչ շատ հեռու ընկած սաթառների (դալար ճյուղերով ու տերևներով հարուստ **թավի** անտառների և արտերի) եզրերին էր՝ անասնակերին մոտ լինելու և արտերը պարարտացնելու նպատակով: **Սարի գիոռ** (փարախ) անվանված ձմեռոց փարախներում հաճախ հովիվն ապրում էր իր ընտանիքով: Նրա գույքը մինչև քնելը տեղավորվում էր **առզելի** վրա, որը փայտյա լայն անշարժ թախտ էր՝ հիմնված պատին առընթեր երկու սյուներին, գետնից մինչև 1 մետր բարձրությամբ: Այլ տեղերում առզելը հայտնի էր **մշկի** (ծառայի) **թախտ** անվամբ**:** Փարախի ճակատային պատի կենտրոնում ծխնելուզավոր օջախ-**բխերիկն** էր տեղադրվում:

[8] Տե՛ս **Տիգրան Մկունդ** 1950, հ. Ա, 155:

Երկրորդ հարկը գերդաստանի բնակելի տունն էր, որտեղ էլ տեղավորված էին նաև **կուլին-**մառանը, **փետկնոց-ամբրնոցը:** Տալվորիկում տները երկհարկ էին, անգամ լուսամուտավոր՝ ծածկերի տակ պատերին բացված ոչ մեծ պատուհաններով: Ի դեպ, Տալվորիկը Սասունի քաղաքակրթված հատվածն էր, որտեղ բնակչությունը հիմնականում երկաթամշակ, երկաթագործ արհեստավորներ էին: Տալվորիկցին հաճախ էր արտագնա աշխատանքի մեկնում Հալեպ և այստեղից բերում էր նորամուծություններ[9]:

Գերդաստանական ընտանիքների բաժանքի ժամանակ այս երկհարկ կամ եռահարկ քոշքերը ենթակա չէին մասնատման[10]: Հայաստանի պատմության թանգարանի ազգագրական բաժնում պահվում է Ստ. Լիսիցյանի ֆոնդը, որում զետեղված են սասունցիների ավանդական բնակարանի վերաբերյալ դեռևս չհրապարակված ուշագրավ նկարագրություններ: Ըստ ճարտարապետ Վ. Հարությունյանի՝ Ստ. Լիսիցյանը նկարագրել է սասունցիների այնպիսի տներ, որոնք ունեցել են աշտարակ, ինչը բնորոշ էր Հյուսիսային Կովկասի ժողովուրդներին: Բնակարանի նույն տիպը Հայկական լեռնաշխարհում հայտնի էր դեռևս Ք.ա. II հազարամյակից: Հայ ժողովրդի կազմավորման մեջ ներգրավված այս տարածքներում բնակված խուրրիները ապրել են ընտանեկան մեծ համայնքներով, որոնք խուրրիերեն կոչվել են **դիմտու**, որ բառացի նշանակում է աշտարակ: Եվ իսկապես, նրանց յուրաքանչյուր ընտանեկան համայնք բնակվել է մի ամրոց-աշտարակում: Ուշագրավ է, որ խուրրիական կամ Միտանիի իշխանությունը Ք.ա. XVI դարում ստեղծվել էր Հյուսիսային Միջագետքում և ամենայն հավանականությամբ տարածվել էր Հայկական Տավրոսից հարավ ընկած շրջանների վրա, ներառյալ Բոհտան և Զաբ գետերի հովիտները[11]: Այդպիսի աշտարակավոր բնակարանների վերաբերյալ ուշագրավ ազգագրական նկարագրությունների ենք հանդիպում ոչ միայն Սասնա գավառի Տալվորիկ, այլև Խիանք գավառակի երկրագործական-այգեգործական շրջանի վերաբերյալ պարբերական մամուլում հրապարակված և մեր գրառած դաշտային ազգագրական նյութերում: Այստեղ «տունները բոլորն ալ քարաշեն են և կրկնահարկ, շինված են գեղական հին դրութ-

[9] Տե՛ս «Մշակ» 1894, № 118:

[10] Այդպիսի ամրոցատիպ տներ գոյություն են ունեցել նաև Վրաստանում: Այստեղ լեռնային անասնապահական կյանք վարող մոխովցիների նույնանման երկհարկանի բնակարանը իր տնտեսական նշանակությամբ յուրատեսակ ռազմական կառույց էր՝ ինքնապաշտպանության տեսակետից մի յուրատեսակ ամրոց (**Харадзе** 1960, т. 1, 131):

[11] Տե՛ս **Դյակոնով** 1971, հ. 1, 182:

յամբ, չունին պատուհան, օդ և լույս կթափանցե միայն դռներեն և երդիկներեն, երկրորդ հարկը մարդկանց, իսկ առաջին հարկը անասունների համար կծառայեն»[12]: Տարբեր անասունների՝ լծկան, կթու, բարձկան, հյուրերի և անցորդների բաժանարարը ճիպոտահյուս միջնորմ աղաղն էր:

Մարագը կալին մոտ էր կառուցվում: Երբեմն կալը կատարվում էր տան կտուրին: Բնակարանի համալիրի առանձին մաս էր կազմում մեղվի փեթկնոցը, որի առջևի մասը փակվում էր գլգիլի փուքից հյուսված փալասով՝ խսիրով:

Ուշագրավ մի հանգամանք ևս: Սասունին բնորոշ էր տների ցրվածությունը՝ պայմանավորված լեռնային անմատչելի տեղանքով ու կառույցների անառիկության և բնակչության ինքնապաշտպանությանը մշտապես վարժված լինելու հանգամանքով:

Լեռնային տեղանքներում բերքի, անասնակերի և այլ տիպի փոխադրումների խիստ դժվարությունների պատճառով գյուղական բնակավայրերն ունենում էին նաև **մզրաներ՝** տնտեսական-արտադրական նշանակության կառույցներ (գոմ, ախոռ, փարախ, կալ, կալտուն), որոնք հարկադրաբար հիմնվում էին բնակավայրից դուրս՝ անասնակեր ապահովող անտառների և արտերի մոտ: Սասունում, ի տարբերություն հովտային շրջանների, տները հարթածածկ էին, դրանց դասավորությունը դարավանդային էր, երբեմն մեկի կտուրը մյուսի համար բակ էր ծառայում կամ կալատեղ՝ կալսելու համար:

Գերդաստանական մեծ ընտանիքներով ապրելու սովորույթով պայմանավորված՝ գլխատները մեծ մակերեսով էին կառուցվում: Տուն հիմնող նահապետը ուներ հետևյալ նկատառումները՝ ա) ընտանիքի հետագա աճն ու գերդաստանի վերածվելը, բ) նախապես մեծ ընտանիքին համապատասխան շենքերի համալիր ստեղծելը, գ) ապագայում այդ ընտանիքի առանձնանալու անխուսափելիությունը, հետևապես նախօրոք կառուցված տունը առանձին մասերի բաժանելու և դուստր ընտանիքներին հատկացնելու հեռանկարը: Այսպիսով, անկախ պատմաաշխարհագրական, բնաէկոլոգիական և զբաղմունքների գերակայությամբ պայմանավորված գործոններից, ռազմատենչ այլ էթնիկ թշնամական տարրերից սպառնացող վտանգը Աղձնիքի հայ բնակչությանը հարկադրել է հիմնել կյանքի և գույքի անվտանգության ապահովման համար հնարավորինս համախմբված, ներփակ բնակարանային համալիր:

Ներսույթը: Սասունում օջախ-կրակարան-թվեքի շուրջն էին քնում գերդաստանի նահապետը և **տանդգինը՝** տանտիկինը, իրենց հատկացված

[12] Տե՛ս «Արևելք» 1900, № 4231, էջ 1:

շարժական թախտ-գահավորակի վրա: Գերդաստանի մեջ մտնող ամեն մի անհատական ընտանիք տեղավորվում էր տան տարբեր անկյուններում առանձին խսիրների, թաղիքների կամ կարպետների վրա՝ իրենց անկողիններով: Պատվավոր ծերունի հյուրերի անկողինը ևս գցվում էր պատվավոր տեղ համարվող կրակարան-օջախի շուրջ: Նորապսակները քնում էին մառան-կուլինում կամ էլ ախոռի սյուների վրա պատրաստված առզել-թախտերի վրա: Այստեղ հաճախ թաղիքն ու կարպետը ծառայում էին նաև իբրև անկողին: Սովորաբար անկողինը ծալք էին դնում: Ընդհանուր ծալքը գերդաստանի միասնության և համերաշխության խորհրդանշաններից մեկն է համարվել:

Սասունում լայնորեն տարածված էին ճիպոտահյուս, մղեղախառն, կավով կամ անասնաղբով ներսից և դրսից ծեփված **փետակները՝** որպես այլուրի, սերմացուի, հացի և ընդեղենի ամբարներ: Դրանք խորանարդաձև էին՝ 10–12 խմ ծավալով: Մեծ ու հղկված այդ ամբարների արտաքին ճակատների վրա փորաքանդակված էին տղամարդու, կնոջ, թռչունների և ծաղկազարդ պատկերներ, վերին մասում փորանկարում էին եզան գլուխ: Ունևոր տնտեսություններում տախտակե ամբարներն ու օժիտի սնդուկները նախշազարդվում էին արևի պտտվող հավերժանշանով: Ճաշի սեղան էին ծառայում կլոր կամ քառակուսի պղնձե մատուցարանը՝ սինին կամ թեփսին, ճիպոտներից հյուսված սալաները, փռոցները և այլն: Ամենուրեք տարածված էր ճաշելիս ծալապատիկ նստելու սովորույթը, այդ պատճառով, որպես սեղան, գործածվել են կարճոտն սեղաններ (խոնչա), որոնք հաճախ շինվում էին ամբողջական ծառաբնից: Նստելու կահույք էին ծառայում ցածրաոտ, 25–40 սմ բարձրությամբ գրակալի նման աթոռը՝ **քուրսին**, մորթե փռոցները, դմփիկները, պատերի երկայնքով շինված քարե կամ տախտակե անշարժ նստարանները, շարժական թախտերը և այլն: Ամանեղենը տեղավորում էին պատի խորշերում՝ պատրհաններում սարքված թարեքների վրա: Պղնձե ամանեղենը պատրաստվում էր Սասնա Հազզո քաղաքում: Կաթնամթերքի ամանեղենը տեղադրվում էր մառան-**կուլինում՝** պատի երկայնքով սարքված հողաքարե պատվանդանի վրա, որը նախատեսված էր նաև պառկելու և նստելու համար: Խոհանոցում գործածվող երկաթե իրերն էին՝ խաչերկաթը, որ դրվում էր կրակարանի վրա, ակիշը, գասկարակը (եռոտանի), ակշաթաթը, թաթիկը, շիշը: Սրանք տեղական արտադրանք էին: Ամեն ընտանիք ուներ իր փոքր աղացը՝ **էրգանքը,** որն այժմ էլ Թալինի՝ սասունցիների ժառանգներով բնակեցված բնակավայրերում օգտագործում են քարաղը մանրացնելու, գարնանը անասուններին տալու համար: Նաև **դինգը,** որ մի եզով էր պտտեցվում,

հիմնվում էր ջրաղացի մոտ: Սասնա Սեմալ և հարևան այլ գյուղերում, սովորույթի համաձայն, պահածոյացված թացանը՝ յուղը, կարագը, պանիրը գրուրներով (կավե կճուճներով) հորում էին առուների եզերքներին՝ խոնավ տեղերում: Յուրաքանչյուր ընտանիք «նշնում» էր իր գրուրները, գիտեր հորած տեղերը: Ամանների դեր էին կատարում նաև կտավից և այծի մազից, բրդե թելերից գործած պարկերը (թեռ, մանդիկ, ջվալ), նաև կաշվե տիկերից պատրաստված հովվական մախաղները, յուղ, պանիր ու լոռ պահելու մոթալները, գինու և օղու տիկերը և այլն:

Սասունում բնակարանը ջեռուցվում էր թվեք-օջախի միջոցով, որի կրակը միշտ պետք է վառ մնար, հսկողությունը իրականացնում էր տանտիրուհին, որին օգնում և փայտ էր բերում նորահարսը: Ամեն գիշեր կոճղ էին դնում կրակարանի մեջ՝ հանդարտ այրվելու համար: XX դ. սկզբներին մուտք գործեց թիթեղյա վառարանը, որ բերվում էր Վանից: Լուցկու դեր էր կատարում չախմախի կայծքարը: Լուսավորելու համար օգտագործվող մոմը մեղրամոմից էր պատրաստվում, որի մեջ դրվող պատրույգը կոչվում էր **ֆընդ** (մոմի կծիկ, բարակ մոմի գործվածք): Տունը լուսավորում էին նաև ճրագով ու լամպով: Լուսավորության հիմնական միջոցը կտուրից բացվող երդիկն էր, երկհարկանի տներում՝ պատերի վերնամասում, առաստաղին կպած փոքր պատուհանները:

Բնակարանային համալիրները Աղձնիքի դաշտային շրջաններում

Աղձնիքի հովտային մեղմ, տաք երկրագործական շրջաններին ավելի բնորոշ էր մեծ, բազմաբաժին, բազմագործառույթ բնակարանային համալիրը: Այն բաղկացած էր գլխատնից, որին **թորվան տուն, թնդրտուն, խորընդուն** կամ մեծ տուն էին անվանում, գոմից, որին **հախոռ** (լծկան անասուններ դեպքում) և **թավլա** (կթու անասունների դեպքում) էին անվանում, **օդայից** (հյուրասենյակ), մառանից, որին **կուլին** էին անվանում, **ամբրնոցից** (ցորենի, գարու շտեմարան), **փետկնոցից, փարախից, մարագից:** Թորվանատանը օգտագործվում էր շուրթերը գետնի մակերեսին հավասար թաղվող թոնիրը 120 սմ խորությամբ և 70 սմ տրամագծով բերանով (Ազնվացձոր, Խութ-Բռնաշեն):

Դաշտավարական և այգեգործական տնտեսավարմամբ այս շրջաններում արդյունագործական նոր ճյուղերի ավելացման արդյունքում ընդլայնվում և մեծանում էին բնակելի և տնտեսական, արտադրական կառույցները: Խիանք գավառակում մեկհարկանի մեծ բնակարանային համալիրը բաղկա-

ցած էր հետևյալ բաժիններից. **սրախ** (սրահ), որի աջ և ձախ կողմերից բացվում էր հյուրասենյակը՝ **մսավրի** (քրդ. հյուր նշ.) **օթախ,** ամառային սենյակը՝ **այվա** անվանումներով: Սրախի կենտրոնից բացվում էր **մեծ տունը,** որի չափերը հասնում էին 12x12 քմ-ի կամ՝ 16x16 քմ-ի, որտեղից էլ բացվում էին երկու մառանների մուտքերը, որոնցում պահվում էին հացի և ընդեղենի կավե և փայտե ամբարները, գինու և օղու կարասները, չորացրած և կախովի մրգերի շարանները և այլն: Մեծ տան մեջ առանձնացվում էին մեծ տնից բացվող, առանձին մուտքերով 3–5, երբեմն էլ ավելի՝ գերդաստանի անհատական ընտանիքների թվին համապատասխան **օդաներ**: Դրանց պատերը կառուցվում էին աղյուսից: Անհատական ընտանիքների այս համալիրները ուշ շրջանի երևույթներ էին, առաջանում էին գերդաստանների տրոհման նախաշեմին՝ որպես հայկական գյուղ և ընտանիք շուկայական հարաբերությունների ներթափանցման հետևանք:

Մեծ տունը գերդաստանի աշխատանոցն էր, խոհանոցը, սեղանատունը, որտեղ ծխնելուզավոր բուխարիկից բացի, կար երկրորդ կրակարանը՝ բաց օջախ-**թվեքը**, որի շուրջն էր տեղադրվում տանտեր-**մալխոյի** և տանտիրուհի-**կըբանու** թախտ-մահճակալը (գահավորակը): Այս մեծ հարկաբաժինը գերդաստանի ընդհանուր հավաքատեղին էր, գերդաստանի ավագ տղամարդկանց վայրը, զրուցարանը, հյուրատունը:

Օդաները անհատական ընտանիքների ննջարաններն էին՝ իրենց անկողիններով, ծալքատեղերով, օրորոցներով, անհատական ընտանիքի սնդուկով՝ օժիտի և հագուստի պահարանով: Օդաների ջեռուցումը ապահովվում էր մեծ տան թվեքի և բուխարու կրակով, որից կավե տաշտերով տեղափոխում էին օդաներ: Նորապսակներին առանձնացնում էին մառան-փետկնոցում:

Խիանքում թոնրատունը տեղավորված էր տան բակում՝ երեք կողմերից փակ պատերով, առջևը բաց ծածկի տակ: Թոնիրը տեղադրված էր **դքա**-թմբիկի վրա՝ թեք, գետնից 0,5 մետր բարձրությամբ, և հացթուխը հացը թխում էր գրեթե կանգնած դիրքով: Գոմը տանը կից էր, բայց առանձին, փողանից բացվող մուտքով:

Հովտային շրջաններում շենքերն սկսվում էին փողանից, որն Աղձնիքի դաշտային այլ վայրերում հայտնի էր նաև որպես **սրախ, դըրգա**: Սա նախասրահ էր, որից բացվում էին մյուս բաժինների դռները: Լեռնային բարձրադիր շրջաններում բակը հասկանում էին ծածկված շենք, միջանցք իմաստով, որը ներտնային մարդատար և անասնատար ուղին էր: Այդպիսի բակերը ունեին նաև ինքնապաշտպանական նշանակություն: Առհասարակ, այսպիսի

մեծ համալիրների դռները լայն ու ցածր էին արվում, որպեսզի բարձկան անասունները ներս ու դուրս անեին, և բացառվեին երիվարներով ասպատակիչների ներխուժումները: Այդպիսիք էին հատկապես Տիգրանակերտի շրջակայքի Սլիվան գավառակի գյուղերի տները:

Հովտային շրջանների ուշագրավ բազմաբաժին համալիր էր Բշերի գավառակի Քըվրզու գյուղի Գորքեի գերդաստանական տունը, որը ներկայանում էր մեկ այլ տարբերակով. դըրգա-նախասրահից աջ կողմից բացվում էր գոմը տանող ուղին և փոքր թնդրտունը, ամբարը (ցորենի քարե պատերով շտեմարանը), կենտրոնից՝ **մեծ տունը** կամ **խորընտունը,** ձախ կողմում պատի երկայնքով հողաքարե **դքան** (թմբիկն) էր, որը ծառայում էր իբրև նստարան և պատվանդան, որի վրա փռվում էր **գուլաբ** (խսիր), պատերին հենում էին թիկնաբարձեր **(մութանքա)**. այստեղ աշխատում էին տան 3 կոշկակարները, որոնք կատարում էին նաև համայնքի պատվերները: Մեծ տունը ընդարձակ բաժանմունք էր՝ որում տեղավորված էին խոհանոցը, սեղանատունը, կանանց աշխատանոցը: Մեծ տանը աղյուսե պատերով առանձնացվում, հիմնվում էին բազմացող անհատական ընտանիքների առանձին ննջարան-օդաները: Ցերեկը ամբողջ գերդաստանը համատեղ մեծ տանն էր անցկացնում, գիշերը առանձնանում էին՝ յուրաքանչյուրը իր հարկաբաժնում՝ օդայում: Գերդաստանի նահապետն ուներ իր օդան: Մեծ տան վերին մասում՝ աջ և ձախ կողմերում, ներսից բացվող նաև երկու մառաններն էին (**մաղզանիգ**) և մեղվանոցը: Մեղվանոցից էլ մի առանձին մուտք էր բացվում համալիրի անկյունում գտնվող նորապսակների ննջարանը: Դաշտավարությունը և բամբակամշակությունը տեղի հայ բնակչության հիմնական զբաղմունքներն էին, ուստի համալիրում հիմնվում էր նաև քարե **ամբարտուն** կամ **ամբրնոց:** Այն՝ ներսից ու դրսից մաքուր սվաղված քարե պատերով բաժին էր, որի մեջ հացահատիկը լցվում էր կտուրից թողնված անցքից: Ամբարտունն ուներ դըրգայից բացվող երկու մուտք, մեկը՝ անշարժ, մյուսով դուրս էին քաշում հացահատիկը:

Այստեղ ևս գոմը կառուցվում էր բնակելի տանը կից: Անասնատար ուղին անցնում էր դըրգայի աջ կողմով: Ոչխարի փարախի մուտքը դարձյալ բացվում էր սրահից: Մեծ տնից դիտակետեր՝ ակնատներ էին թողնվում գոմն ու փարախը ներսից ևս հսկելու համար: Դըրգայի վրա, երկրորդ հարկում հյուրասենյակն էր **(օդա մեվանե)**, որը բաղկացած էր 3 բաժիններից, որտեղ հյուրընկալվում էին բարեկամները, խնամիները, հյուրերը. այն նաև օտար անցորդների ընդունարան էր: Երբեմն էլ ազգակից ընտանիքների՝ առանձնաց-

ված քնելատեղ չունեցող նորապսակ զույգերին էին ժամանակավոր տրամադրում իրենց տան այս հարկաբաժինը՝ մեղրամիսն անցկացնելու համար:

Քրդական ենթակայության այս շրջաններին հատուկ էր նաև օժանդակ կառույցների համախմբվածությունը մի ընդհանուր ծածկի տակ:

Խոշոր և ունևոր գերդաստանական տներին իբրև համայնքային հյուրընկալման բաժին և ժողովարան բնորոշ էին օդա-հյուրասենյակները, որոնք կառուցվում էին տանը կից, առանձին կամ էլ միջանցք-դըրգայից բացվող մուտքով: Ալմատինա շրջանի Շքաստակ գյուղի Ըվդո (Ավետիք) տների գերդաստանական տան համալիրի միջանցքի աջ ու ձախ կողմերում կար երկու օդա, մեկը հյուրերի և համայնքային ժողովարանի համար էր, մյուսը՝ երիտասարդների հավաքատեղի: Սակայն ուշագրավ է այն, որ երկրորդ հարկի ծայրին ընկած օտար, անցանկալի հյուրերի համար նախատեսված հյուրասենյակ-օդայի մուտքը դրսից էր: Սրանք օտար հյուրերի ընդունարան-ննջարաններ էին՝ առանձնացված գերդաստանից:

Ձեռքի տակ եղած պատմագրական, դաշտային ազգագրական նյութերը հաստատում են այն իրողությունը, որ, անկախ բնակչության սոցիալական շերտավորման աստիճանից, բնակելի, տնտեսական ու արտադրական շենքերի ձևերի ու կառուցվածքների միջև տարբերությունը եղել է այն, որ մեկը քիչ թե շատ բարետես էր և ընդարձակ, մյուսը՝ փոքր ծավալով ու աղքատիկ ներսույթով, իսկ ճարտարապետական կառուցողական լուծումները ըստ էության եղել են նույնը: Քրդահպատակ այս շրջաններում հայերի տները չպետք է առանձնանային իրենց շքեղությամբ: Անկախ աշխարհագրական, բնաէկոլոգիական գործոններից և զբաղմունքների այս կամ այն տեսակի գերակայությունից, Արևմտյան Հայաստանի մեծ մասի, առավել չափով Աղձնիքի ռազմատենչ այլէթնիկ թշնամական տարրերի համատեղ բնակեցումը սպառնալիք էր տեղական հայ բնակչության համար, ամենուրեք հայը հարկադրված է եղել բնակարանային համալիրները հիմնել հնարավորինս համախմբված, մի տանիքի ներքո՝ կյանքի և գույքի անվտանգության ապահովման համար:

Այս երևույթը առավել ցայտուն է դրսևորվել Հայնի հայաշատ քաղաքի հայ բնակչության ապրելակերպում: Այս քաղաքում հայկական թաղամասերը առանձնանում էին, տները միմյանց կպած էին այնպես, որ ամբողջ հայկական մասը միակտուր զանգված էր կազմում: Վտանգի դեպքում հայերը ստիպված էին փակվել տներում:

Ներսույթը: Տների պատերն այս շրջաններում ունեին պատրհաններ (**աչկունք**), որտեղ թարեքների վրա դասավորվում էին կենցաղային իրերը,

մամֆրաշների մեջ փաթաթված անկողինը և այլն: Դրանք ծածկվում էին սպիտակ վարագույրով: Նորապսակ զույգերը քնում էին պատերի հետ կանգնեցված սյուներից կապված անշարժ թախտերի (**առզել)** վրա, որքան հնարավոր էր տան անդամներից հեռու: Դադարում էին առզելների վրա քնել միայն երեխա ունենալուց հետո՝ տան մեջ նոր օդա հիմնելով: Ամռանը ննջարանը կտուրն էր[13]:

Խիանքում լվացքի և լողանալու համար 15 օրը մեկ ամեն ընտանիք օգտվում էր համայնական ընդհանուր աղբյուրներից, գետակներից, առվակներից, ջրվեժներից: Ծերունիները և պառավ կանայք տանն էին լողանում: Նրանց օգնում էին ջահել հարսներն ու աղջիկները:

Հայնիում կին, թե տղամարդ, լոգանքն ընդունում էին տնից դուրս, քարայրներում, որտեղ մեկնած ընտանիքների թվին համապատասխան օջախներ էին վառվում, լվացքը անում էին աղբյուրների, ջրվեժների մոտ: Արշալույսը **(շավախը)** չբացված՝ 20–30 ընտանիք շտապում էր նման վայրերում տեղ գրավելու: Տան հարսներն էին պարտավոր լողացնելու տղամարդկանց: Այրերին լողացնելուց հետո, արևաածագին կանայք սկսում էին լվացքը, իսկ մութը ընկնելուն պես լողանում էին տարեց կանայք, ապա փոխադարձ օգնությամբ՝ հարսներն ու աղջիկները[14]: Լվացքը փռում էին տանիքում կապած պարաններին:

Արձանագրենք մի ուշագրավ երևույթ ևս. քանի դեռ ամբողջ գերդաստանի համար անկողինը ներկայացնող թաղիքները, կարպետները, խսիրները հավաքվում էին մի տեղում՝ ընդհանուր ծալք կազմած, դրանով նշանավորվում էր գերդաստանի միասնության, դեռևս համերաշխ, համատեղ ապրելու գաղափարը: Իսկ երբ տան համալիրում, գլխատան մեջ հիմնվեցին անհատական ընտանիքների թվին համապատասխան օդաներ, և յուրաքանչյուր ընտանիքի անկողին իր ծալքատեղն ունեցավ իրեն հատկացված օդայում, դա դարձավ գերդաստանի տրոհման, մասնատման նախադրյալներից մեկը:

Մեծ տունն ուներ գմբեթավոր ծածկ, երդիկից էլ ապահովվում էին օդափոխությունն ու լուսավորությունը: Երդիկի տեղական անվանումը **էրթածակ** էր**:** Բացի այդ, արևելյան կամ հարավային պատի վերնամասում, ծածկի տակ 2–3 տեղով թողնվում էին փոքր լուսամուտներ, որոնք ձմեռը փակվում էին ձեթոտ թղթով:

---

[13] Տե՛ս **Նահապետյան** 1985, տ. 8, 89–91:

[14] Տե՛ս **Նահապետյան** 1985, տ. 8, 35–37:

Բշերիկի և Սլիվանի հովտային գյուղերում ընդունված էր ոչ թե ուղիղ թաղվող, այլ թեք թոնիրը, որը տեղադրվում էր տան համալիրի մի անկյունում՝ **թունդրտուն** կամ **տանդուր** բաժնում: Կանայք այս թոնրի մեջ հացը թխում էին կանգնած դիրքով: Քրդահպատակ այս շրջաններում ոչխարի փարախն ու մարագը բնակարանային համալիրի հետ կապվում էին մեկ ընդհանուր մուտքով[15]:

Տների ճակատներն ուղղված էին դեպի հարավ՝ արևահայաց լինելու և հյուսիսային սաստիկ քամիներից պաշտպանվելու նպատակով: Ամռանը կտուրը ծառայում էր իբրև ննջարան, ամեն մի անհատական ընտանիք մեկուսացվում էր եղեգից հյուսված միջնորմով և կարիճներից պաշտպանվելու համար կտուրի վրա փշնթուփ էին փռում ու ծածկում հաստահյուս վարագույրխսիրով:

Աղձնիքում բնակարանային շինարարությունը՝ հիմքեր փորելը, շինանյութերն անտառից ու դաշտից տեղ հասցնելը, պատերը շարելն ու տները ծածկելը և հողանքը արվում էր համայնքի օգնությամբ: Փոխօգնության այդ ձևը **(զուբարա)**, որ իրագործվում էր տղամարդկանց միջոցով, դրամական հատուցում չէր ենթադրում: Շինարարական նյութերի, հատկապես անտառանյութի տեղափոխումը բնակարանաշինության ամենադժվար պահն էր: Այդ առումով ուշագրավ էր տանիքը ծածկելիս կիրառվող «**մարթակի զուբարան**» (Ազնվաձոր գավառ) կամ **գերան բերելու, գերան վերցնելու զուբարան** (Սասուն): Աղձնիքում, հատկապես լեռնային շրջաններում, տները շատ ամուր էին կառուցվում. կտուրին լցվում էր 80–100 սմ հաստությամբ հող, որպեսզի դիմանար հաստ շերտով նստող ձյանը և կալսոցին կոռիով կալ անելուն: Դրա համար անհրաժեշտ էին հաստ պատեր և հսկա գերաններ, որոնց տեղափոխումը, շենքի վրա բարձրացնելը պահանջում էր 50–60 տղամարդու դժվարին ջանք ու ճիգ: Սրան էլ հավելած՝ սարերի թեք կողերով, նեղ ու ծուռ ճամփաներով այդ գերանները տեղ հասցնելը: Աղձնիքում գերանատարության **մարթակի զուբարայի** ժամանակ համայնքից յուրաքանչյուր տուն տրամադրում էր 1 տղամարդու և 1 զույգ եզ՝ լծասարքով: Լծկանազուրկ տնտեսությունն օգնության էր գալիս իր գործիքով կամ հողակիր քթոցով: Զուբարային մասնակցողների թիվը հատկապես մեծ էր լինում **հողանքի** օրը՝ հասնելով 40–50 և ավել հոգու: Զուբարայով էր արվում նաև ջրաղացի և ձիթհանի աղացաքարեր տեղափոխելը, հասարակական նշանակության այլևայլ աշխա-

[15] Տե՛ս **Նահապետյան** 1985, տ. 8, 89–90:

տանքներ՝ **օդա**-հյուրատներ, եկեղեցիներ, ջրաղացներ ու ձիթհաններ կառուցելը, ճանապարհներ նորոգելը, ոռոգման առուներ հանելը և այլն[16]:

Ուշագրավ նյութեր են գրառված բնակարանաշինության հետ կապված հավատալիքների վերաբերյալ: Բնակարանի հիմքերը փորելիս ոչխար էին զոհաբերում՝ մատաղ անում՝ խերով տուն լինելու համար: Նորակառույց տունը չար աչքից հեռու պահելու նպատակով պայտ կամ խոյի եղջյուրներ էին ամրացնում դռան վերին մասում, իսկ Զատկին՝ եփած կարմիր ձու: Սասունցիների մեջ պահպանվում էր «բախտավոր» և «անբախտ» կացարանների հավատալիքը:

Առավել ջերմեռանդ հավատալիքներ էին հաստատվել տան օջախի՝ իբրև սրբության նկատմամբ: Աղձնիքում օջախը գերդաստան-ընտանիքի գաղափարի մարմնացումն էր. **օջախ շինել** նշանակում էր ընտանիք կազմել, **օջախ պահել**՝ տան, ընտանիքի տնտեսական հոգսերը հոգալ, **օջախ վառո՞ղ է, թե՞ մարող** արտահայտությունը նշանակում էր հարմար ու վստահելի ամուսին կլինի՞, թե՞ ոչ և այլն: Նոր տուն հիմնելիս մայր տան օջախի կրակով ազգատոհմի նահապետն էր առաջին անգամ վառում նորաստեղծ ընտանիքի օջախ-թոնրի կրակը, որով ազդարարվում և սկսվում էր նորակազմ ընտանիքի կյանքը: Կրակը անշեջ էին պահում: Գիշերը տաք, չմարած կրակի մոխրի մեջ **անթխոց** (կոճղ) էին դնում, ծածկում կրակով՝ մինչև հաջորդ օրը կրակը պահպանելու համար[17]:

Չար աչքից հեռու պահելու հավատալիքներից մեկը «վերի այծի», «էմակդար» եզան գանգերը տան դռան կամ գլխավոր ճակատի պատից կախելն ու դռան շեմի վերևի մասում պայտ ամրացնելն էր, կամ էլ կարմիր ձվի կճեպները ծեփի կամ անասնաղբի հետ խառնած դռան վերևի ճակատին ծեփելն էր: Նոր տուն տեղափոխվելիս կամ ամառանոց բարձրանալիս մատաղ էին տանում և բաժանում, որ օջախը խերով լիներ և «բարաքյաթն»՝ անպակաս[18]:

Եզրակացություններ

Բնակարանը կենսապահովման մշակույթի էթնիկ առանձնահատկությունները կրող ցայտուն համալիրներից է: Այն Աղձնիքում դրսևորվել է ինչպես ճարտարապետական հորինվածքային յուրովի լուծումներով, այնպես էլ ներսույթի կազմակերպման և ձևավորման առանձնահատկություններով: Կարելի

[16] Այս մասին մանրամասն տե՛ս **Նահապետյան** 2012, 128–165:

[17] Տե՛ս **Նահապետյան** 2020, գիրք 3, 230–242:

[18] Տե՛ս **Պետոյան** 1965, 201–202:

է թվարկել յուրահատկություններից մի քանիսը. ա) անկախ պատմաաշխարհագրական, բնակլիմայական և տնտեսավարման տիրապետող գերակա գործոններից, Արևմտյան Հայաստանում, առավելապես Աղձնիքում, ռազմատենչ թշնամական տարրերից մշտապես սպառնացող վտանգը հայ մարդուն հարկադրել է բնակարանը, տնտեսա-արտադրական շինություններով հանդերձ, հիմնել որպես կյանքի ու գույքի անվտանգության համար հնարավորինս հավաք, մեկ ծածկի տակ համախմբված, ներփակ կառույց, որը յուրատեսակ ռազմական ամրոց էր հիշեցնում: բ) Սասունում, ի տարբերություն մյուս՝ հովտային շրջանների, տները հիմնվում էին գերազանցապես դժվարամատչելի տեղանքներում, 2–3 հարկանի ժայռաբեկոր քարերով, վերնահարկերի ճակատային պատերի վերնամասում թողնվում էին փոքր պատուհաններ՝ հրազենով զինված ինքնապաշտպանության կազմակերպման նպատակով: գ) Սասունում ծածկը հարթ էր, քանզի լանջային տեղանքներում տները դասավորվում էին դարավանդային համակարգով, երբ մեկի կտուրը մյուսի համար բակ և երբեմն էլ՝ կալատեղ էր ծառայում: դ) Գերդաստանական մեծ ընտանիքներով ապրելու սովորույթով պայմանավորված՝ գլխատները մեծ մակերեսով էին կառուցվում, քանզի դրանք ընտանեկան և համայնքային բազմագործառույթ նշանակություն ունեին: ե) Սասունում թոնրին փոխարինել է պայտաձև կավե թոնրի ¼ մասը կազմող բաց օջախը՝ թվեքը: Մինչդեռ դաշտային և նախալեռնային տարածքներում ջեռուցման համակարգերից բնորոշը թոնիրն էր, որով և պայմանավորված էր գլխատան անվանումը՝ թորվան տուն: զ) Խիանքում և դաշտային այլ շրջաններում, ամեն մի գերդաստան 15 օրը մեկ բնակավայրից հեռու ընկած աղբյուրներից, գետակներից, ջրվեժներից օգտվելու՝ լվացքի, լողանալու համայնքային սովորություններ են ունեցել: Այն հասարակական բաղնիքի էր վերածվում: է) Գերդաստանական տան համալիրում թորվանատուն-խորընդուն անվամբ գլխատունը ամենակարևոր բաժանմունքն էր, որի մեծությունը պայմանավորված էր գերդաստանի կազմով ու կառուցվածքով, տնտեսական զբաղվածության ծավալներով, ազգային դարավոր ավանդներով, երբ ընտանեկան բաժանքը աղետ է համարվել: Այդ հարկաբաժինը միաժամանակ գերդաստանի ննջարանն էր, խոհանոցը, սեղանատունը, աշխատանոցը, զրուցարանը, սրբազան արարողությունների վայրը և այլն: ը) Թորվանտուն-խորընդունը Աղձնիքի գրեթե բոլոր շրջաններում գոմի հետ գտնվել է միևնույն ծածկի տակ՝ բնակարանը անասունների շնչով մշտապես տաք պահելու, ինչպես նաև ավարառուներից անասուններին հսկելու նպատակով: Այս կարգի բնակարան-ախոռ ձևը հատուկ է եղել արևմ-

տահայ ազգագավառներին: թ) Ինչպես բնակավայրի, նույնպես և բնակարանի ձևերը անմիջականորեն կապված էին տեղի աշխարհագրական և բնակլիմայական պայմանների, հայ բնակչության զբաղմունքի բնույթի ու կենցաղային առանձնահատկությունների հետ: Երկրագործի և խաշնարածի, հարուստի ու աղքատի, լեռնաբնակի ու դաշտաբնակի կենցաղային պայմաններին համապատասխան՝ տարբերվում էին նաև նրանց բնակարանները, նույնիսկ փոխադրամիջոցների տեսակները՝ սայլ, թե ավանակ ու մարդու շալակ: Դա իր կնիքն է դրել գյուղական բնակարանների հատակագծերի ձևի ու ծավալի վրա, քանի որ դրանցով էր որոշվում այս կամ այն շինանյութը հայթայթելու հնարավորությունը: Մյուս կողմից, ընդհանրություններով հանդերձ, միմյանցից զգալիորեն տարբերվում էին հասարակական տարբեր խավերի բնակարաններն ու տնտեսական կառույցները:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Արաքս» 1894–95, Գ.Ա: պատկերազարդ հանդես, Ս. Պետերբուրգ, տպ. Սկորոխոդովի:

«Արևելք» 1900: Օրագիր քաղաքական և ազգային, Կ. Պոլիս, տպ. «Արևելք» N 4231, 1903, N 5221:

«Արեւելք» 1903, Ուղևորի հիշատակները, № 5221:

«Արձագանք» 1984: Գրական և քաղաքական լրագիր, N 140, 190, Թիֆլիս, տպ. Հ. Մարտիրոսյանցի:

Դյակոնով Ի.Մ. 1971, Միտանի պետությունը Հյուսիսային Միջագետքում և Հայկական լեռնաշխարհում, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 181–189 էջ:

Ժամկոչյան Բ. 1902, Հայնի, Տեղագրական, ազգագրական, պատմագրական, Պէյրութ, տպ. Տօնիկեան, 457 էջ:

«Լումայ» 1893: Գրական, քաղաքական, պատմական, հանրային ամսագիր, ԳԱ, Թիֆլիս, տպ. Ն. Աղայանի:

Կարապետյան Ե. 1962, Սասուն, Ազգագրական նյութեր, Երևան, Հայպետհրատ, 202 էջ:

«Հանդես ամսօրյա» 1896: Բարոյական, ուսումնական և արվեստագիտական, N 9 Վիեննա, տպ. Մխիթարյան միաբանություն:

Հյուբշման Հ. 1901, Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, տպ. Մխիթարյան միաբանության, 449 էջ:

«Մշակ» 1887: Գրական, քաղաքական շաբաթաթերթ, N 131, 1894, 118, Թիֆլիս, տպ. «Ծերեթելի և ընկերության»:

Նահապետյան Ռ. 1970–2010, Դաշտային ազգագրական նյութեր, անձնական արխիվ, տտ. 1–26:

Նահապետյան Ռ. 1973, Գերդաստանական տոնը և կենցաղը Աղձնիքի Ազնվաց ձոր գավառում, ԲԵՀ, N 1, Երևանի պետական համալսարանի հրատ., 236–243 էջ:

Նահապետյան Ռ. 2004, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբը), Պատմաազգագրական ուսումնասիրություն, Երևան, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ ՀՀ ԳԱԱ հրատ., 260 էջ:

Նահապետյան Ռ. 2020, Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 3, Երևան, Տիր հրատ., 394 էջ:

Պետոյան Վ. 1965, Սասնա ազգագրությունը, Երևան, ԵՊՀ «Ռոմայոր» տպագրություն, 549 էջ:

Սամուելյան Խ. 1941, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2, Երևան, Արմֆան, 342 էջ:

Սասուն 1894–95, «Արաքս» հանդես, գիրք Ա, Թիֆլիս հրատ.:

Սրվանձտյանց Գ. 1982, Թորոս Աղբար, հ. 2, երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 563 էջ:

Տիգրան Մկունդ 1950, Ամիտայի արձագանքները, հ. Ա, Ուիհոքն-Նիւ Ճըրզի, 584 էջ:

Քսենոփոն 1970, Անաբասիս, թարգմ. և ծանոթագրությունները Ս. Կրկյաշարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 282 էջ:

Харадзе Р. 1960, Грузинская семейная община, т. 1, Тбилиси, АН Груз. ССР, 190 с.

ТИПЫ ТРАДИЦИОННЫХ НАРОДНЫХ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ В АГДЗНИКЕ
(XIX в. – начало XX в.)

НААПЕТЯН Р.

Резюме

Ключевые слова: Агдзник, Сасун, горный населённый пункт, родовые населённые пункты, жилищные типы, родственные кварталы, самооборона.

Армянское село в Агдзнике до Геноцида в 1915 г. сохраняло древний обычай заселения родственными кланами, сосредоточенными в отдельном населённом пункте, что было продиктовано социально-экономическими и оборонительными соображениями. Следовательно, одной из характерных особенностей населённого пункта была укомплектованность жилищ под одной общей крышей.

Сельские населённые пункты представляли собой прилегающие друг к другу, связанные друг с другом изнутри и снаружи (посредством открывающегося по соседству входа) жилые комплексы, крыши которых прев-

ращались в тропинки, площадки для коллективных работ, проведения собраний и торжеств.

Обычай совместного проживания кланами способствовал формированию родовых населенных пунктов.

TYPES OF TRADITIONAL RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK

(in the 19th and at the beginning of the 20th centuries)

NAHAPETYAN R.

Summary

Keywords: historical Agdznik, Sasun, mountain settlement, tribal settlements, housing types, related quarters, self-defense

Before the Genocide of Armenians in 1915, the Armenian village in Agdznik preserved the ancient custom of settling kindred clans in separate settlements. This was conditioned by socio-economic and defense considerations. Consequently, one of the characteristic features of the settlement was the cohesion of housing complexes under one common roof.

Rural settlements were residential complexes with houses adjoined to each other. The latter were connected to one another from within and from outside (through an entrance to the neighbouring house). Their roofs turned into pathways, areas for collective work, meetings, celebrations.

The custom of cohabitation by clans contributed to the formation of clan settlements.